

Հաշվետվություն

Պրորբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի փորձագետ Ժենյա Իվանյանի 2020 թվականի նոյեմբերի 25-ից 2021 թվականի նոյեմբերի 25-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Ժենյա Իվանյանս Պրորբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում որպես փորձագետ աշխատում եմ ՀՀ ԱՆ գլխավոր քարտուղարի 2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1234-Ա հրամանի համաձայն և 2020 թվականի նոյեմբերի 25-ին կնքվել է թիվ 68 պայմանագիրը: 2020 թվականի նոյեմբերի 25-ից 2021 թվականի նոյեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ պրորբացիայի ծառայության վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրորբացիայի շահառուներին ցուցաբերել եմ սոցիալական աջակցություն, ինչպես նաև խորհրդատվություն եմ տրամադրել Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 125 շահառուների:
2. Պրորբացիայի ծառայությունում հաշվառված թվով 15 շահառուներին ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող վարսահարդարման հմտություններ, դեկորատիվ կիրառական արվեստ, հոգեբանական դասընթացներին ներգրավելու նպատակով իրականացրել եմ խմբերի հավաքագրում, շահառուների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված խորհրդատվական զրույցներ, դասապրոցեսի կազմակերպում, դասընթացների ամփոփում և ավարտ:
3. Պրորբացիայի ծառայությունում հաշվառված թվով 7 շահառուներին «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող վարսավիրական և մատնահարդարման հմտություններ, ինչպես նաև բիզնես հմտություններ դասընթացներին ներգրավելու նպատակով իրականացրել եմ խմբերի հավաքագրում, շահառուների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված խորհրդատվական զրույցներ, դասապրոցեսի կազմակերպում և ամփոփում:

4. ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային և մարզային բոլոր մարմիններում իրականացվել է շահառուների կրթական և մասնագիտական կարիքների գնահատում, մասնակցել են հարցաթերթի մշակման, լրացման հետ կապված խորհրդատվությունների տրամադրման, տվյալների հավաքագրման աշխատանքներին և ստեղծել են տվյալների բազա և իրականացրել արդյունքների վերլուծություն:
5. «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում «Կյանքը փոխվում է կրթությամբ» ծրագրի շրջանակներում իրականացրել են Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 40 շահառուների հետ մասնագիտական կարիքների և կրթական կարիքների գնահատում, արդյունքների վերլուծություն և գնահատման արդյունքում մասնագիտական խմբերի հավաքագրում:
6. Հանդիպել են Աջափնյակ, Շենգավիթ, Էրեբունի, Ավան վարչական շրջանների Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի պետերի, ինչպես նաև Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների տնօրենների հետ, որի արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել վերոնշյալ վարչական շրջաններում բնակվող Պրոբացիայի ծառայությունում հաշվառված շահառուներին ներգրավել աշխատանքի տեղավորման և սոցիալական աջակցության ծրագրերում, որի արդյունքում սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվել են Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 3 շահառուներ:
7. Շահառուների աշխատանքի տեղավորման խնդիրների հետ կապված՝ Պրոբացիայի ծառայությունում կազմակերպել են հանդիպում-քննարկում, որին մասնակցել է Շենգավիթ համայնքում բնակվող թվով 5 շահառու, որի արդյունքում Շենգավիթի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվել են զբաղվածության պետական գործակալության ծրագրերը, ինչպես նաև կատարվել են ուղղորդումներ աշխատանքի տեղավորման հետ կապված:
8. ՀՀ արդարադատության նախարարության «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ՀՀ ԱՆ պրոբացիայի

ծառայության Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 2 շահառուների ներգրավել են ջերմատան մշտական աշխատանքներում:

9. Այցելել են Երևանի քաղաքային մարմնում հաշվառված 1 շահառուի բնակության հասցե, որի արդյունքում գնահատել են վերջինիս սոցիալական, հոգեբանական և առողջական կարիքները և ըստ գնահատված կարիքների ցուցաբերվել է համապատասխան օգնություն և աջակցություն:

10. Կապ են հաստատել «Հայկական կարմիր խաչ» ընկերության, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության, «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության և «Հոգեբանների հայկական գիտական միավորում» ՀԿ խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական հայկական կենտրոնի ներկայացուցիչների հետ, քննարկել համագործակցության ուղղություններ պրոբացիայի ծառայության շահառուների վերասոցիալականացման ծրագրերի իրականացման օժանդակության նպատակով:

11. «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ և վերջիններիս հետ համագործակցության արդյունքում Երևանի քաղաքային մարմնում հաշվառված հաշմանդամության կարգ ունեցող 1 շահառու ընդգրկվել է «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից իրականացվող համակարգչային դասընթացներին՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնում» ծրագրի շրջանակներում:

12. Կապ են հաստատել «Հոգեբանների հայկական գիտական միավորում» ՀԿ խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական հայկական կենտրոնի հետ, որի արդյունքում 2 շահառուի ուղղորդել են բժշկական աջակցություն ստանալու նպատակով:

13. Պրոբացիայի ծառայության անչափահաս շահառուի հետ այցելել են Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցության արդյունքում իրականացվել է փաստաթղթերի հավաքագրում, որի արդյունքում շահառուն ընդունվել է դպրոց:

14. Պրորբացիայի շահառուի հետ այցելել են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ», ուսումնական գծով պրոռեկտորի և համապատասխան ամբիոնի վարիչի հետ համագործակցության արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շահառուի դիմումի համաձայն կրթությունը վերականգնել 15.01.2022 թվականից:

15. Վարել են դասընթաց «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ» թեմայով, որը իրականացվել է Պրորբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 8 շահառուների հետ:

16. Վարել են դասընթացներ հաշատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանք մասնագիտացմամբ երրորդ կուրսի ուսանողների պրակտիկայի շրջանակներում հետևյալ թեմաներով՝ «Վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի մշակման ընթացակարգը», «Պրորբացիայի ծառայողի և իրավախախտի փոխհարաբերությունների ձևավորումը», «Դեպքի վարման ընթացակարգերը պրորբացիայի շահառուների հետ»:

17. Այցելել են դատապարտյալի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի վերաբերյալ 4 տուժողների բնակության վայր, և պարզել վերջիններիս դիրքորոշումը ԲԿ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալի պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցի վերաբերյալ:

18. Կազմակերպել են շահառուների այցելություն մշակութային միջոցառումներ, որի արդյունքում այցելել են՝

- Հովհաննես Թումանյանի թանգարան /Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 4 անչափահաս շահառուներ/
- Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան /Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 4 շահառուներ /
- Եղիշե Չարենցի անվան տուն թանգարան /Երևանի քաղաքային մարմնում հաշվառված թվով 9 շահառուներ /

19. Մասնակցել եմ «ՀՀ պրոբացիայի ծառայության աջակցության ծրագրի» շրջանակներում կազմակերպված դասընթացին, որտեղ քննարկվել է պրոբացիայի շահառուների կարիքների և ռիսկերի գնահատման գործիքի վերանայման հետագա աշխատանքները:
20. Մասնակցել եմ Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության «Լեհական օգնություն» ծրագրի ֆինանսավորմամբ Արևելյան գործընկերության պետական կառավարման ակադեմիայի ծրագրի շրջանակում «Պրոբացիա, հաշտարարություն և էլեկտրոնային մոնիթորինգ» թեմայով առցանց դասընթացներին:
21. Մասնակցել եմ Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված «Աջակցություն Հայաստանում պրոբացիոն ծառայության զարգացմանը» ծրագրի շրջանակներում իրականացվող կասկադային դասընթացներին:
22. Մասնակցել եմ «Ուղղիչ-կատարողական ծառայությունների միջազգային նվազագույն ստանդարտները» թեմայով աշխատանքային սեմինարին:
23. 25.11.2020թ-18.05.2021թ ժամանակահատվածում իմ կողմից կազմակերպվել է Երևանի քաղաքային մարմնի գրությունների ելքերը, կատարվել է 3228 ելք:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության
Երևանի քաղաքային մարմնի փորձագետ՝



Ժենյա Իվանյան

25.11.2021թ.